չի հրատարակուած Բաջենցի փաստաթղթային ժառանգութիւնից, չնայած միայն Հռոմի դիւաններում մեր հաշուումներով պահւում են մօտ ութ տասնեակ հայերէն, լատիներէն ու իտալերէն ինքնագիր փաստաթղթեր:

Ստորեւ հրապարակում ենք մի շարք փաստաթղթեր, գրուած ինչպէս Օգոստինոս Բաջենցի, այնպէս էլ այլոց կողմից, որոնք գալիս են օգնելու հետազօտողներին լուսաբանելու Արեւելեան Հայաստանի Նախիջեւանի գաւառի ԺԷ դարի սկզբի պատմութեան բազում խնդիրներ: Այստեղ չենք անդրադառնում Բաջենցի կենսագրութեանը, միաժամանակ չենք ծանրանում ծանօթագրելու դէպքերի ու անձերի վերաբերեալ տեղեկութիւնները: Այդ բոլորը մանրամասնօրէն ուսումնասիրուած է Կարլոս Ալոնսոյի, Հ. Սահակ Ճեմճեմեանի ու հատկապէս Ամբրոսիոս Էսցերի վերոյիշեալ աշխատութիւններում, միաժամանակ նշելով, որ մի շարք դէպքերում ամենեւին չենք կիսում հատկապէս վերջին ուսումնասիրողի կտրուկ գնահատականները Բաջենցի գործունէութեան վերաբերեալ[5]*:*

1. Նախիջեւանի հայ կաթողիկէները Ուրբանոս VIII Պապին

[1627 թուական, 7 նոյեմբերի, Խօշկաշէն]

Անուն Աստուծոյ

Ծայրագոյն քահանայապետ, ջահարփիափայլ հայր սուրբ

Ծանուցումն լիցի քոյին սրբութեանդ, որ յետ սրբոյն Գրիգորի Լուսաւորչոյն, որ էր ի ժամանակի սրբոյն Սեղբեստրոսի պապոյն եւ ի թագաւորութեան մեծին Կոստանդիանոսի. եկաց հնազանդ եկեղեցիս

---

5 Տեղին է նշել նաեւ, որ հայ ուսումնասիրողներից Ա. Մադոյեանը Օգոստինոս Բաջենցի մահը թուագրում է 1667 թուականով (տե՛ս «Արաքս», էջ 63, հմմտ. նոյնի՝ Օգոստինոս Բաջենց (ստեղծագործական դիմանկար), - «Նախիջեւան», «Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ, 1999, թիւ 3-4, էջ 11), որն ակնյայտ սխալ է: Պահպանուած բոլոր փաստաթղթերը աներկբայօրէն նրա մահուան թուականը նշում են 1653 թուականի ապրիլի 16-ը (տե՛ս Էսցերի վերոյիշեալ աշխատութիւնը):